



## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍԱՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

### ՏՈՆԵՐԸ Ա. ԷԶՄԻԱՆՆՈՒՄ



այ Եկեղեցին, գատկական տոնից հետո մինչև Հոգեգալստյան առաջին կիրակին, տոնում է Հատկապնդում Տերունական տոներ և այդ ժամանակամիջոցով Սրբոց տոներ չեն հիշատակվում:

Հոգեգալստյան Ներկրորդ զարաթից Ենտոմքայն սկսվում են սրբոց հիշատակների տոները և Հայ Եկեղեցին, բնականարար, իր հարգանքը, երախտագիտությունն ու նախապատվությունը պիտի տար այն սրբերին, որոնք Հայաստանում եղել են քրիստոնեական հավատի ուսհիրանները:

Քանի որ Հայաստանում քրիստոնեական հավատի առաջին նահատակները եղել են 37 մաքրակենցաղ կուսերը, այդ պատճառով էլ Հայ Եկեղեցին սահմանել է սրբոց տոներն սկսել Հոփահիմյանց և Գայանյանց կուսերի հիշատակությամբ:

Հայ Եկեղեցին այդ կուսերի համար հորինել է հատուկ շարականներ և սահմանել՝ հանդիսավոր տոնել բոլոր Եկեղեցիներում նախատոնակով և հիտել օրվա Ս. Պատարագով, հատկապես այդ սրբերի գերեզմանների վրա կառուցած հոյակապ վանքերում:

Ս. Գրիգոր Լուսավորիչը, Խոր-Վիրապից կնքելով, Տրդատ թագավորի ձեռքով նահատակված և ինն օր անթաղ մնացած մարմինները հողին է հանձնում և Ս. Հոփիսիմեի և 32 կուսերի նահատակված տեղում մատու կառուցում 301 թվին:

618 թվին, Կոմիտաս կաթողիկոսը մատուսը քանդելով, փառահեղ եկեղեցի է կառուցում, որը հետագայում կաթողիկոսները վերանորոգում են և վանքի վերածում: Այսօր այդ

վանքը հայ հնագույն կոթողների մեջ իր ինքնուրուց տեղի ունի և հայկական ճարտարապետության գերազանց գործերից մեկն է: Ս. Հոփիսիմեի տոնի հետեւյալ օրը տոնվում է Ս. Գայանեի և իր երկու ընկերութիւնների տոնը Գայանեի վանքում, որոնց գերեզմանների վրա դարձյալ Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով մատում էր կառուցված 301 թվին: 630 թվին Եղիշ կաթողիկոսը, քանդելով այդ մատուոր, նոր եկեղեցի է շինում Հրաշալի կաթողիկոսվ: Սա եղ ժամանակին ավերվում է և Փիլիպոս կաթովիկոսը այն նորոգում է 1652 թվին:

Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցում է նաև մի վկայարան այն հնձանում, որտեղ ապրում էր Հոփիսիմե կույսը իր ընկերուցիներով: Ներկա եկեղեցին կառուցել է նահատակ կաթողիկոսը 1694 թվին և կողմում է Շղաղաթի վանք Բատ ավանդության, այսուղեղ նահատակվել է մի մենավոր կույս, որը հիվանդության պատճառով չի կարողացել փախչել:

Ահա այս խնկելի առաջին նահատակների տոներն էին, որ փառավոր հանդիսավորությամբ տոնվեցին հոգիսի 5-ին, 6-ին և 8-ին Մայր Աթոռի ամբողջ միաբանության, Հոգևոր Ճեմարանի սաների և հավատացյալ հայ ժողովրդի մասնակցությամբ:

Այս տոների հետ, Հայ Եկեղեցին, անշուշտ, չէր կարող մոռանալ այդ մաքրակենցաղ անմեղ սրբերի մարմինները հավաքող, հողին հանձնող և նրանց գերեզմանների վրա մատու կառուցող այն մեծ հովվապետի հիշատակը, որը Խոր-Վիրապից ենթել, առաջին սովոր պարտականությունը համարեց անմեղ նահատակներին անմահացնել:

Դա Սուրբ Գրիգորն էր, ազգի Լուսավորի-

չը, որի Խոր-Վիրապից կննելու տոնի հիշատակը Հայ Եկեղեցին որոշել է կատարել կովսերի տոներից անմիջապես հետո:

Հունիսի 9-ին, Միածնաէջ Մայր Տաճարում Ս. պատարագ մատուցվեց ազգին ծերունազարդ Վեհափառ Կաթողիկոսի ներկայությամբ, որտեղ Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը, իր քնատուր Հովետորական խոսքերով, դրվատեց Ս. Գրիգոր Լուսավորչի դերը Հայ Եկեղեցու, ինչպես և Հայ ազգի գոյության և զարգացման ասպարեզում:

Միթք կարելի էր մոռացության տալ և այն չնաշխարհիկ կոթողի տոնը, որը Միածնի որդու ցուցմունքով, Համաձայն տեսլան, Հիմնարկել էր Ս. Գրիգոր Լուսավորիչը 301 թվին և ավարտել 303 թվին:

Հունիսի 10-ին կատարվեց նաև Ս. Էջմիածնի տոնը:

Ս. Էջմիածին: Ո՞չ, որքա՞ն քաղցր է հընշում այդ անոնքը ամեն մի Հայ մարդու բնանոաւ: Ինչպիսի՝ երախտագիտությամբ է տոնում Հայ Հավատացյալը բուն Հայրենիքում և ինչպիսի՝ անձկոթյամբ է հիշում ու մորմոքում Հայ տարագրի սիրու օտար երկրում, օտար երկնակամարի տակ և օտար ազգերի մեջ:

Հայ ժողովուրդը, որ իր գոյության ընթացքում ունեցել է ուրախ և տխուր շրջաններ, միշտ էջմիածինն է հիշել էջմիածինն է հիշել Հայը իր ամբողջ տարագրության ընթացքում: Էջմիածինն է, որ հիշեցրել է Հային իր Հայրենիքը, իր ծափումը: Էջմիածնին է պարտական Հայ ազգը, որ այսօր պահպանել է իր լեզուան՝ շնորհիվ Մեսրոպների, Խորենացիների և Նարեկացիների: Էջմիածնի կարուտն է, որ քաշում է ամեն մի Հայ՝ Հայրենիքից դուրս: Էջմիածնից դուրս ելած Հայրական հայութական նվիրակներն են եղել, որ ի մի են ծովել Հայ ժողովլորի սրտերը և կապել նրան Մայր Հայրենիքի հետ:

Էջմիածնի միաբաններն են եղել, որ Հայ ժողովրդի գոյությանը, Հայրենիքին և կրոնին վտանգ սպառնալիս, սովոր ու խաչը ձեռքին, ազգի լավագույն զավակների հետ արյուն են թափել՝ հանուն Հայրենիքի ու Հավատի:

Էջմիածինն է եղել այն օրորոցը, որը Մասիսի ստորոտում իր քաղցր մեղեդիներն է երգել ամեն մի Հայ մարդու ականջին և հիշեցրել իր փառավոր անցյալը:

Էջմիածինն է եղել, որ լեզու է տվել մեր բանաստեղծներին ու գուաններին, որոնք էջմիածնի գովքն են երգել ու մեծագործ Հայրապետների լավագույն հիշողությունները Մայր Աթոռից:

Հավատացյալ Հայը սիրել և սիրում է էջմիածինը:

Եթե օտարազգին Հայաստան է գալիս ուսումնասիրության, նա պարտք է համարում անպայման էջմիածին այցելել: Այդ օտարազգիները իրենց բազմահատոր գործերում էջմիածինն են դրվատել, ուրեմն՝ որքան ավելի պիտի սիրե ու պաշտե հայը իր սրբություն սրբոցը, որ 1600 տարվա ծանրության է կրում վրան:

Ահա այդ սրբավայրի տոնն էր, որ կատարվում էր հունիսի 10-ին: Պատարագին էր Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը: Երգում էր Հովհանոր մեմարանի խումբը: Ներկա էին Վեհափառ Կաթողիկոսը, միաբանությունը, հոգբազմություն, թե՛ բնիկներից և թե՛ եկվորներից: Տաճարի բակը լցված էր ուկտավորների ավտոմեքենաներով:

Ս. Պատարագի ժամանակ բացվում է թանգարանը: Ժողովուրդը խոնվում է և լցվում թանգարանը, որպեսզի իր աշխով տեսնի այն բոլոր սրբություններն ու հոգիունները, որ դարերի ընթացքում պահել-պահպանել է Սովոր Էջմիածինը:

«Հայր մերակից առաջ պատարագիլ Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը իր քարոզում վեր է հանում Ս. Էջմիածնի կատարած դերը Հայ ազգի պատմական անցյալում և ներկայում:

Ս. Պատարագից հետո կատարվում է մաղթանք Գերորդ Զ.ի Հանդիսավորությամբ՝ Ս. Էջմիածնի և Հայոց հայրապետության հարատելության համար:

«Էջ միածինն ի հօրէ» շարականի հետ ղողանջում են Մայր Տաճարի զանգերը և ուրախությամբ լցնում հավատացյաների սըրտերը:

Մաղթանքը վերջանում է:

Վեհափառ Հայրապետից վերցվում է խաչը, գավազանն ու շողագալուրը: Վեհին մատուցվում է ոսկեպուփ հասաւ կոշված գավազանը, որից հետո միաբանությունը նրան առաջնորդում է զեպի Վեհարան:

Հավատացյաները իրար հրելով մոտենում են Վեհափառ Հայրապետի Ս. Աշը Համբուրելու Թափորը հազիվ հազ հասնում է մինչև Վեհարանի դարպասը: Դարպասի մոտ Վեհին մատուցվում է գործարազարդ խաչը և նա պահպանիչով օրհնում է ժողովրդին:

Մինչև ուշ երեկո ժողովուրդը խոնված էր Մայր Տաճարի գավթում և ապա ցրվում է, իր հետ տանելով հոգեկան քաղցր ապրումների լավագույն հիշողությունները Մայր Աթոռից:

«Տե՛ր, անսասան պահիր միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռը»:

